«Թումանյանի ռեալիզմը» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Մ. Ջրբաշյանը։ Զեկուցողը բնութագրեց Թումանյանի տեղը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ գրական ուղղությունների փոխադարձ պայքարի և ներգործության մթնոլորտում։ Սկզբից ևեթ հետևելով կյանքի ռեալիստական պատկերման սկզբունքներին, Թումանյանը իր ստեղծագործության մեջ ընդունեց նաև մյուս գրական մեթոդների, մասնավորապես առաջավոր ռոմանտիզմի նվաճումները։ Զեկուցման մեջ հանգամանորեն խոսվեց նաև Թումանյանի ստեղծագործական համակարգում պայմանական, ֆանտաստիկ և հիպերբոլիկ պատկերների գեղարվեստական նշանակության մասին։

*

Սեպտեմբերի 9-ին էջմիածնում տեղի ունեցավ ինստիտուտի գիտական սեսիան նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Զեկուցումներով հանդես եկան բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ս. Սարգսյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանը։

*

Սեպտեմբերի 13-ին Կիրովականում տեղի ունեցավ Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական սեսիա։ Ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Ս. Նալբանդյանի բացման խոսքից հետո զեկուցումներ կարդացին Ա. Տ. Ղանալանյանը, Ն. Բ. Աղաբաբյանը, Է. Մ. Ջրբաշյանը և Գ. Ցիցիշվիլին։

ԹԱՏԵՐԱԳԵՏԻ ՎԱՍՏԱԿԸ

Հայաստանի գիտական և թատերական հասարակությունը նշում է Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ականավոր թատերագետ Արգիս Մելիքսեթյանի ծննդյան 70-ամյակը։

Իր գիտական-հասարակական եռանդուն գործունեությունն սկսելով Հայաստանում Սովետական կարգերի ստեղծման առաջին իսկ օրերից, Արգիս Մելիքսեթյանն անցել է սովետահայ մշակութային գործչի փառավոր ուղի։

1921—1930 թթ. ընթացքում նա վարել է պետական, պրոֆմիութենական պատասխանատու պաշտոններ, հանդես է եկել որպես գրող և ժուռնալիստ։

1930 թ. նա ստանձնում է նորաստեղծ Հայկինոյի ոցենարական բաժնի ղեկավարի պաշտոնը, այն վարում է շուրջ տասնչորս տարի և նպաստում այնպիսի բարձրորակ գեղարվեստական և փաստագրական կինոնկարների ստեղծմանը, ինչպիսիք են «Պեպո», «Զանգեզուրը», «Գիքորը», «Խազփուշ», «Մեքսիկական դիպլոմատները», «Սև թևերի տակ», «Սովետական Հայաստան», «Հայաստանի ոլորները» և այլն։

Հաջորդ տարիներին Ս. Մելիքսեթյանը ղեկավարում է հանրապետության արվեստի գործերի վարչության թատերական բաժինը և ապա դառնում նույն վարչության գլխավոր խորհրդատու՝ դրամատուրգիայի գծով, մեծ չափով նպաստելով մեզանում դրամատուրգիայի զարգացմանը և հանրապետության թատրոնների խաղացանկի թարմացմանը։

Այս շրջանից սկսած՝ Ս. Մելիքսեթյանի անունը անխզելիորեն կապված ենք տեսնում մեր ժողովրդի թատերական արվեստի հետ։ Նա կենտրոնական մամուլում հանդես է գալիս որպես թատերական լուրջ քննադատ, առանձին գրքերով հրատարակում մի շարք ծավալուն թատերագիտական աշխատություններ՝ «Երևանի պետթատրոնը» (1934 թ. Ն. Զարենցի խմբագրությամբ), «Путь нашего театра» (1941), «Թատերական ակնարկներ» (1945), «Հովհաննես Աբելյան» (1954), որոնցում հայ թատերագիտության մեջ առաջին անգամ ամբողջ խորությամբ վեր է հանում և արժեքավորում հայ բեմի խոշոր վարպետների՝ Հովհաննես Աբելյանի, Վահրամ Փափազյանի, Մկրտիչ Ջանանի, Ամո Խարազյանի, Արուս Ոսկանյանի, Օլգա Գուլազյանի, Ավետ Ավետիսյանի և այլոց վաստակը, գիտական բարձր մակարդակով հանրագումարի ենթարկում մեր թատրոնի առաջին տասնամյակների նվաճումները։

Հայ թատերագիտության մեջ լուրջ ներդրում էր Ս. Մելիքսեթյանի 1960 թ. լույս ընծայած «Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության» աշխատությունը, որտեղ լայն կտավի վրա, իրեն հատուկ գիտական բարեխղճությամբ, հեղինակը ցուցադրում է սովետահայ թատրոնի զարգացման ողջ պատմությունը, անդրադառնում Հայաստանի քաղաքներում և եղբայրական հանրապետություններում ծավալված թատերական եռուն կյանքի հիմնական փուլերին։

Սովետահայ թատրոնի պատմության հարցերին կուզընթաց Ս. Մելիքսեթյանը լուրջ կերպով զբաղվում է նաև հայ թատրոնի անցյալի գործիչների ստեղծագործության և ժառանգության գիտական հետազոտությամբ ու հրապարակմամբ. Գևորգ Չմշկյանի, Պետրոս Ադամյանի, Սիրանույշի մասին նրա գրած հետազոտությունները իրենց բարձրացրած փաստական նյութով և արվեստաբանական վերլուծությունների խորությամբ առանձնակի տեղ են գրավում մինչև այժմ հայ թատրոնի պատմությանը նվիրված գիտական աշխատությունների թվում։

Ս. Մելիքսեթյանը տասնամյակների ընթացքում անձամբ միջամտել է սովետահայ թատրոնի ամենօրյա խնդիրների առաջքաշմանը և լուծմանը, իր գիտելիքներն ու եռանդն ի սպաս է դրել նաև հանրապետությունում թատերական կադրերի պատրաստման ասպարեզում։ Նա Երևանի թատերական տեխնիկումի հիմնադիրներից է, հետագայում ստեղծված թատերական ինստիտուտի առաջին դասախոսներից մեկը, նրա թատերագիտական ֆակուլտետի դեկանը և ապա ամբիոնի վարիչը։ Ներկայումս հանրապետության թատրոններում, կինոյում, հեռուստատեսությունում աշխատող դերասանների, ռեժիսորների մեծագույն մասը նրա սաներն են։

Ս. Մելիքսեթյանը նաև թանգարանային գործի նշանավոր կազմակերպիչ է։ 1935 թ. նրա ջանքերով է ստեղծվել Երևանի թատերական թանգարանը, որը նա ղեկավարել է 15 տարի, այստեղ կենտրոնացնելով հայ նոր թատրոնի զարգացումը բնութագրող հազարավոր վավերագրեր։

1954 թ., երբ ստեղծվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանը, Ս. Մելիքսեթյանը վարում է նրա գիտական քարտուղարի և ապա 1963-ից դիրեկտորի պաշտոնը։ Նրա ղեկավարած գրականության և արվեստի թանգարանը լայն կապերի մեջ է արտասահմանի հայկական գանձարանների հետ և հսկայական դեր է կատարում հայ գրականության, թատրոնի, երաժշտության գանձերի հավաքման, կենտրոնացման և գիտական մշակման գործում, լայն հնարավորություններ ստեղծում հանրապետության գրականագետների, արվեստաբանների, պատմաբանների բեղմնավոր աշխատանքի համար։

Ավելի քան կես դար համագործակցելով հայ գրողների, արվեստագետների մի քանի սերունդների հետ, Ս. Մելիքսեթյանը խորապես ճանաչել է նրանց ստեղծագործության առանձնահատկությունները, մարդկային առաքինությունները, նրանց սերտ կապը ժողովրդական զանգվածների հետ և գրել արժեքավոր հիշողություններ։ Նրա «Մտերմական Շիրվանզադեն» հուշագրությունը ջերմ ընդունելություն գտավ ընթերցողների լայն շրջաններում։

Արդեն 70 տարեկան է Ս. Մելիքսեթյանը, բայց երիտասարդական ավյունով լեցուն, անխոնջ ու գործիմացությամբ շարունակում է իր շնորհակալ աշխատանքը՝ թատերագիտության մեջ, մամուլում և թանգարանային ասպարեզում։

Գ. ՄԱԴՈՅԱՆ